

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԿՐՏՉՅԱՆ ՄԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ**

**ՍԻՄՎՈԼԻԶՄԸ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՈՒՄ.  
XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ - XX ԴԱՐԻ ՍԿԻՖԸ**

**ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական  
արվեստ, դիզայն» մասնագիտությամբ  
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

---

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСКУССТВ**

**МКՐՏՉՅԱՆ ՄԱՆԵ ԳԱՐՆԻԿՈՎՆԱ**

**СИМВОЛИЗМ В АРМЯНСКОМ  
ИЗОБРАЗИТЕЛЬНОМ ИСКУССТВЕ:  
КОНЕЦ XIX - НАЧАЛО XX ВЕКОВ**

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени  
кандидата искусствоведения по специальности**

**17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное  
искусство, дизайн”**

**ԵՐԵՎԱՆ – 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Աղասյան Արարատ Վլաոհմիրի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թթակից անդամ  
Ղազարյան Վիգեն Հովհաննեսի  
արվեստագիտության թեկնածու  
Ավագյան Կրթուր Վարդանի

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Արովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. նոյեմբերի 28-ին, ժամը 14.00-ին, ՀՀ  
ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 016 Արվեստագիտության  
մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան  
պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի  
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. հոկտեմբերի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Ասատրյան Ա. Գ.**

---

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель - доктор искусствоведения, профессор  
**Агасян Аракат Владимирович**

Официальные оппоненты - член-корреспондент НАН РА  
**Казарян Виген Оганесович**  
кандидат искусствоведения  
**Авакян Артур Варданович**

Ведущая организация - Армянский государственный педагогический университет им.  
Х.Абояна

Защита диссертации состоится 28-го ноября 2013г. в 14.00 часов на заседании  
специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в  
Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна  
24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.  
Автореферат разослан 28-го октября 2013г.

Ученый секретарь специализированного совета,  
доктор искусствоведения, профессор

**Ասատրյան Ա. Գ.**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** 19-րդ դարի վերջում ֆրանսիայում ծագած սիմվոլիզմը կարծ ժամանակահատվածում գրավեց ինչպես ողջ Եվրոպան, այնպես էլ Ռուսաստանը: Կյանքի իմաստն արտաքին աշխարհից անդին փնտրող այս բազմաբովանդակ գեղարվեստական ուղղությունն իր դերն ու տեղն ունեցավ նաև հայ գրականության և արվեստի էջերում: Պատմական ժամանակակից իրադարձությունների բովով անցնող հայ արվեստագետների համար ևս իրականությունից փախուստ տվող սիմվոլիզմը ոգեշնչման աղբյուր, նաև յուրօրինակ ապաստան դարձավ:

Եվրոպական արվեստարանական միտքը տարիներ շարունակ առանձին մենագրությունների և ալբոմների միջոցով անդրադարձել է սիմվոլիստական ուղղությանը: Նեռևս 1956թ. լույս տեսած Զոհ Ռևալդի «Պոստիմպրեսիոնիզմի պատմություն»: Վաճ Գոգից Գոգենի<sup>1</sup> գրքից մինչև վերջին տարիներին հրատարակված ամփոփ աշխատություններում (Մ. Գիրսոն՝ «Սիմվոլիզմ»<sup>2</sup>, Ռ. Ռապետի՝ «Սիմվոլիզմը»<sup>3</sup>) մանրակրկիտ քննության են առնված թե՛ սիմվոլիզմի պատմությունը, թե՛ ուղղության հայտնի ներկայացուցիչների ստեղծագործությունները: Դայ կերպարվեստում սիմվոլիզմի ունեցած տեղն ու դերը ցայսօր բացահայտված չէ: Դայ արվեստարանության պատմության մեջ սիմվոլիզմին նվիրված առանձին մենագրություններ չկան, մինչդեռ ուղղության այս կամ այն չափ հարել են հայ արվեստի խոշորագույն ներկայացուցիչները՝ Վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թաղեսրամներ, Սարտիրոս Սարյանը, Դավիթ Գյուրջյանը: Դայ արվեստում սիմվոլիզմի հարցերի քննության տեսակետից բացահայտված առարատ Աղասյանի «Մարտիրոս Սարյան. վաղ ստեղծագործությունը»<sup>4</sup> և «Սիմվոլիզմը և Սարտիրոս Սարյանի ստեղծագործությունը»<sup>5</sup> մենագրությունները:

**Աշխատանքի նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության նպատակն է բացահայտել և ուսումնասիրել սիմվոլիզմի դրսևումները 19-րդ դարավերջ և 20-րդ դարասկզբի հայ կերպարվեստում: Ատենախոսության խնդիրներն են.

- ✓ ուսումնասիրել սիմվոլիզմի պատմությունը, հիմնարար դրույթները և ուղղության գլխավոր ներկայացուցիչների արվեստը,
- ✓ քննել գրական-գեղարվեստական այն մեջիանուր մթնոլորտը, որը նպաստեց հայ կերպարվեստում սիմվոլիզմի սաղմնավորմանը,
- ✓ բացահայտել և ներկայացնել այն հայ արվեստագետների ստեղծագործությունը, ում աշխատանքներում դրսւորվել է սիմվոլիզմի ազդեցությունը,
- ✓ մանրամասն քննել հայ կերպարվեստում սիմվոլիզմի օրինակները,
- ✓ վերարժնորել սիմվոլիզմի տեղն ու դերը հայ կերպարվեստում<sup>6</sup>:

<sup>1</sup> John Rewald, Post-impressionism: From Van Gogh to Gauguin, New York, Museum of Modern Art, 1956, 614 ր.

<sup>2</sup> Michael Gibson, Symbolism, Köln, "Taschen", 2006, 256 ր.

<sup>3</sup> Rodolphe Rapetti, Le Symbolisme, Paris, "Flammarion", 2007, 320 ր.

<sup>4</sup> Ա. Ագասյան, Մարտիրոս Սարյան. Ռանու տարածք, Երևան, Հանդեսություն ԱՀ Արմենիա, 1992, 210 էջ.

<sup>5</sup> Արարատ Ագասյան, Սիմվոլիզմ և մարտիրոս Սարյան, "Վոշտակ Երևան", Երևան, 2012, 118 էջ.

<sup>6</sup> Թեև ատենախոսության երրորդ գլխում են նաև սիմվոլիզմից ազդված սփյուռքահայ նկարիչները, մեր առջև խնդիր չենք դնում կատարել սփյուռքահայ արվեստում սիմվոլիզմի դրսւումների մեջիանուր վերլուծություն՝ դա հանարելով առանձին ուսումնասիրման առարկա:

**Աշխատության աղբյուրները:** Ուսումնասիրվող թեմային վերաբերվող կարևորագույն աշխատանքները Ա. Աղասյանի վերոհիշյալ մենագրություններն են: Այս գրքերում հայ արվեստաբանության պատմության մեջ առաջին անգամ հատուկ անդրադարձ է կատարվում սիմվոլիզմի պատմությանը, և ուղղությունը դիտարկվում է հայ արվեստի շրջանակներում: Հեղինակը մանրամասն վերլուծում և դասակարգում է հայ մեծանուն վարպետի սիմվոլիստական շղանի ստեղծագործությունները: Մեր ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք նաև բննվող արվեստագետներին նվիրված գրքերից և ալրուններից, որոնցից կառանձնացնենք Ռուբեն Դրամբյանի «Եղիշե Թաղեկույան», «Մարտիրոս Սարյան»<sup>8</sup>, «Դակոր Գյուրջյան»<sup>9</sup> մենագրությունները, Վարդգես Սոլրենյանցին նվիրված Վահան Դարությունյանի<sup>10</sup>, Սանյա Ղազարյանի<sup>11</sup>, Մարտիրոս Միքայելյանի<sup>12</sup> աշխատությունները, Վահրամ Գայֆեճյանի արվեստը լուսաբանող ալրոնը<sup>13</sup>, Դայաստանի ազգային պատկերասրահի՝ Գեղրդի Յակովլովի արվեստը ներկայացնող՝ Վերջերս հրատարակված գրքը<sup>14</sup>, ինչպես նաև Կոտայք Աղասյանի «Դայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում»<sup>15</sup> համապարփակ մենագրությունը և Մարտիրոս Սարյանի «Գրառումներ իմ կյանքից»<sup>16</sup> գիրքը: Այս աշխատանքներին պարբերաբար անդրադարձել ենք ատենախոսության համապատասխան բաժիններում:

Ուսումնասիրությունը կատարելիս օգտվել ենք Դայաստանի ազգային պատկերասրահի հուշաթերապային բաժնից և Փոնդերից, ՀՀ ԳԱԱ Վրվեստի ինստիտուտի արխիվից, Ե. Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվից:

**Աշխատության գիտական նորույթը:** Դայ արվեստաբանության շրջանակներում սույն ատենախոսության մեջ առաջին անգամ.

✓ համակողմանի ու մանրակրկիտ քննության է առնվում Եվրոպական և ռուսական սիմվոլիզմը,

✓ քննվում են հայ պարերական մանուկի, մասնավորապես «Բանքեր գրականութեան և արուեստի» և «Գեղարուեստ» հանդեսների, սիմվոլիստական ուղղվածությունը և ուղղությանը վերաբերվող տեսական հոդվածները,

✓ ծատվում են Վարդգես Սոլրենյանցի արվեստում սիմվոլիզմի ազդեցությունը կրող աշխատանքները.

<sup>7</sup> Ռուբեն Դրամբյան, Եղիշե Թաղեկույան (Կյանքը և ստեղծագործությունը), Երևան, ՀՍՍՈ Գիտությունների ակադեմիայի հրատարակություն, 1955, 145 էջ:

<sup>8</sup> Ո. Գ. Դրամբյան, Սարտիրոս Սարյան, Երևան, ՀՍՍՈ հրատարակչություն, 1960, 160 էջ:

<sup>9</sup> Բ. Դրամբյան, Ակոپ Գյորգյան, Երևան, Իզդ. ԱԻ ԱրմՀԱՀ, 1973, 124 էջ.

<sup>10</sup> Կահան Դարությունյան, Վարդգես Սոլրենյանց, Երևան, ՀԽՍՀ ԳԱ, 1960, 140 էջ:

<sup>11</sup> Սանյա Ղազարյան, Վարդգես Սոլրենյանց, Երևան, «Դայագենհրատ», 1960, 96 էջ:

<sup>12</sup> Սարտիր Միքայելյան, Վարդգես Սոլրենյանց, Երևան, «Անահիտ», 2003, 160 էջ:

<sup>13</sup> Գայֆեջյան. Ալբոմ (Составитель альбома и автор очерка о жизни и творчестве В. Гайфеджяна Эллен Гайфеджян, авторы статей: Николай Котанджян, Генрих Игитян, Рубен Адаян), Ереван, “Тигран Мец”, 2002, 240 с.

<sup>14</sup> Իրինա Բագդամյան, Գեորգի յակով (1884-1928), Ереван, Национальная галерея Армении, 2010, 256 с. Վիկտորիա Բադալյան, Գեորգի յակով (1884-1928), Ереван, Национальная галерея Армении, “Эдит Принт”, 2010, 168 с.

<sup>15</sup> Կրապատ Աղասյան, Դայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ուսկան Երևանցի», 2009, 292 էջ:

<sup>16</sup> Սարտիրոս Սարյան, Գրառումներ իմ կյանքից, Երևան, «Սովետական գրող», 1980, 300 էջ:

✓ Եղիշե Թաղևոսյանի և Յակոբ Գյուրջյանի արվեստում սիմվոլիզմի դրսնորումներն առաջին անգամ դաշնում են առանձին ուսումնասիրության առարկա,

✓ զուգահեռ է տարվում Մարտիրոս Սարյանի գեղագիտական հայացք-ների և սիմվոլիզմի գեղագիտության նիշն,

✓ որոշարկվում է սիմվոլիզմի դերը Գեղրդի Յակովովի և Վահրամ Գայֆեցյանի արվեստում:

Սույն ատենախոսությունը 19-րդ դարավերջում և 20-րդ դարասկզբում հայ կերպարվեստում սիմվոլիզմի դրսնորումները ներկայացնող առաջին համապարփակ աշխատությունն է:

**Աշխատության փորձաքննությունը:** Ասենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է Երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի նիստում, իսկ հիմնական դրույթները գեկուցվել են Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական չորրորդ (22 դեկտեմբերի, 2009), հինգերորդ (2-3 դեկտեմբերի, 2010) և Վեցերորդ (26-27 նոյեմբերի, 2011) նատաշրջաններում, հրատարակվել նստաշրջանների նյութերի ժողովածուներում, «Կանթեր» և «Երիտասարդ արվեստաբան - 1» գիտական հոդվածների ժողովածուներում:

**Աշխատության կառուցվածքը:** Ասենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, որոնցից առաջինը և երկրորդը տրոհված են առանձին ենթագլուխների, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

## Գլուխ առաջին ՄԻՄՎՈԼԻԶՄԸ ՈՐՄԵՍ ԳԵՂԱՐԿԵՑՏԱԿԱՆ ՈՒՂՈՌԹՅՈՒՆ

1.1. Սիմվոլիզմի ծագումը, դրա պատճական, փիլիսոփայական, գրական և գեղարվեստական նախարյանները. 19-րդ դարում Եվրոպայում ծավալվեցին քաղաքական և տնտեսական բուռն հրադարձություններ, որոնք արտացոլվեցին նաև ժամանակի մտածողների և փիլիսոփաների հայացքներում: Փոփոխություններն անդրադառնում էին նաև արվեստի բնագավառում, երբ դասականությանը փոխարինելու եկավ ոռմանտիզմը, ոռմանտիզմին՝ ռեալիզմը, ապա ասպարեզը գրավեցին հմարեսիտնիստները: Նման իրադրությունը հող նախապատրաստեց գեղարվեստական նոր ուղղության՝ սիմվոլիզմի հ հայտ գալու համար: Սիմվոլիզմի (խորիդապաշտություն) սկզբնավորումն ազդարարվեց 1886թ., երբ փարիզյան Ֆիջարո թերթի գրական հավելվածի էջերում հրատարակվեց ֆրանսագիր հոյն բանաստեղծ Ժան Մորեասի հեղինակած «Սիմվոլիզմի մանիֆեստը»: Սիմվոլիստական երկեր՝ թ՛, գրական, թ՛՝ գեղանկարչական, իհարկե, մինչ այդ էլ ստեղծվել էին: Սակայն հենց մանիֆեստը նպաստեց, որպեսզի սիմվոլիզմն հշշակվի ժամանակի հրամայականով ասպարեզ եկած գրական-գեղարվեստական ուղղություն՝ իր առջև նպատակ ունենալով սիմվոլների միջոցով փոխանցել գաղափարային այն բազմաշերտ աշխարհը, որ բարնված է շրջապատող իրերից ու երևույթներից անդին: Սիմվոլիստներն իրենց գաղափարախոսությունը կառուցում էին հենվելով Արթուր Շոպենհաուերի, Եդուարդ Ֆոն Յարտնանի, Ֆրիդրիխ Նիցշեի փիլիսոփայական հայացքների վրա: Գրական ասպարեզում իրենց առաջնորդ-

ռահվիրաների դերում սիմվոլիստները տեսնում էին Շառլ Բողերին, Արքյուր Ուենբոյին և Պոլ Վեռլենին: Չավատարիմ Վեռլենի «Երաժշտություն» ամենից առաջ՝ խոսքերին՝ սիմվոլիստներն առանձնահատուկ տեղ էին հատկացնում երաժշտությանը՝ այս ասպարեզում առաջնորդ համարելով Ռիխարդ Կազմերին: Գեղարվեստում սիմվոլիստների «նախահայրերն» էին պրեռաֆայելիտները: 19-րդ դարի կեսին Անգլիայում ծագում առաջ գեղարվեստական այս ուղղության առավել վար ներկայացուցիչներ Դանթե Գարթին, Ռուսական Սիլեսը, Ուկիան Յոլման Յամը, Էդվարդ Բյորն-Ջոնսը, Մեդոքս Բրաունը գտնում էին, որ ճեթենայացված դարում իրական գեղեցկությունը կորսվել է, իսկ լուսանկարչության օյլուոր կերպարվեստի առջև նոր խնդիրներ է դրել: Պրեռաֆայելիտները խնդրի լուծումը գտան ակադեմիական արվեստի ծերքերումներից հրաժարվելու և վաղ Վերածննդի արվեստին դիմելու ճանապարհով: Իրականությունից փախուստի դիմելով՝ պրեռաֆայելիտներն իրենց հայացքն ուղղում էին դեպի անտիկ դիցաբանությունը, աստվածաշնչյան տեսարանները, միջնադարյան ոյուցազնավեպերը՝ անդրադառնալով կյանքի և մահվան, կոնչ և սիրո թեմաներին: Իսկ որպես ոգեշնչման աղբյուր պրեռաֆայելիտները հաճախ օգտվում էին գրական հիմքից:

**1.2. Սիմվոլիզմի տարածումը, ուղղության տեսարաններն ու երեսիկան**. Սիմվոլիզմի ալիքը բավական արագ ողողեց արվեստի և գրականության էթերը: Սիմվոլիստները հիմնադրեցին մի շարք պարբերականներ, որոնցից էին Վոգը, Սիմվոլիստը, Մերկյուլը որ Ֆրանսը, Պլեադը, Կոնքը, Ուեյու Րյանցը, Ուեյու Վագմերինները, Պյուսը և Վալոնին: Յայտնի գրաքննադատներից էին Ուեմի որ Գուրմոնը և Ֆելիքս Ֆենենը: Սիմվոլիստների և հմապեսինհատների առաջին համատեղ ցուցահանդեսը բացվեց Բար որ Բուտեվիչի պատկերասրահում 1891թ.: Սիմվոլիզմի առաջին տեսարաններից էր Ալբեր Օրյեն, ով անմիջապես կանգնած էր ուղղության ակունքներում: Զևակերպաելով սիմվոլիզմի երեսիկան՝ Օրյեն կտրուկ տարանջատեց ռեալիստական և գաղափարական ուղղությունները: Սիմվոլիստական ուղղության հետևողությունը հաճախ հենց իրենք էին հանդես գալիս որպես ուղղության տեսարաններ, ինչպես, օրինակ, Մորիս Շենիի, Օդիլոն Ուեդոնի, Էդվարդ Սունկի դեպքում: Ֆրանսիայում գրական սիմվոլիզմը, որն արդեն հիմքեր ուներ Բողերի, Վեռլենի, Ուենբոյի և Ժյուլ Լաֆորդի ստեղծագործություններում, արագորեն ամրապնդվեց՝ պայմանավորելով ֆրանսիական պոեզիայի զարգացումն ընդունակ մինչև դարավերջ: Ստեֆան Մալարմեի շուրջ համախմբվեցին Անրի որ Ուենյեն, Ալբեր Սամենը, Լորան Տախյադը: Սիմվոլիստ բանաստեղծների «կուռքը» Բացարձակ գաղափարն է, որին հնարավոր է հասնել պոեզիայի միջոցով: Բանաստեղծը պետք է որոշակի ձև հաղորդի այդ Գաղափարին՝ մշտապես հաշվի առնելով, որ առաջնայինն ինքը Գաղափարն է, իսկ ձևը պետք է ենթակա դեր կատարի: ճանաչողությունն այժմ ի սպաս է որպես զգացումներին, որոնք էլ պատասխանատու են ընկալման ձևավորման համար: Պատկերավոր նկարագրությունները փոխարինվում են ակնարկներով և սիմվոլներով, որոնք կոչված են արբանացնելու զգացումներ և անուրջներ: Բառերն այժմ միանշանակ չեն և խորհելու տեղիք են տալիս: Լեզվային ճշգրտությունն իր տեղը զիջում է երաժշտական հնչողությանը: Սիմվոլիստների ամենամեծ ներդրումը գրականության մեջ դառնում է «ազատ հանգը»: Եթե գրականության մեջ սիմվոլիզմն անցնում է կարմիր թելի նման և ներկայությունն

ակնհայտ է, ապա նրան շատ բարդ է հետևել երաժշտության մեջ: Այստեղ սիմվոլիզմի դրոշմը որոշակի առումով նկատելի է երաժշտական հմարեսիոնիզմի հիմնադիր և խոշորագույն ներկայացուցիչ Կլոդ Շերյուսիի, ինչպես նաև ռուս կոմպոզիտոր և դաշնակահար Ալեքսանդր Սկրյաբինի ստեղծագործություններում: Սիմվոլիզմն արագ մուտք գործեց նաև թատրոն՝ հատկապես Մորիս Սետերլինի ախեսների շնորհիվ: 19-20-րդ դարերի սահմանագիշին սիմվոլիստական դրաման այնպիսի տարածում գտավ, որ ստեղծվեցին սիմվոլիզմի առանձին «թատերական օջախներ»: Այդպիսիք էին *Théâtre de l'Œuvre* (Ստեղծագործական թատրոն) թատերախումբը Փարիզում և Վերա Կոմիսարժևսկայայի թատրոնը Սանկտ-Պետերբուրգում: Այսպիսով, գեղանկարչական տարբերակից սկիզբ առած սիմվոլիզմը շուտով «վարակեց» արվեստի մյուս ճյուղերը՝ նաև առանձին էց դրանալով կերպարվեստի պատմության մեջ:

**1.3. Գեղարվեստական սիմվոլիզմի արանձնահատկությունները, գլխավոր ներկայացուցիչները.** Սիմվոլիստները ձգտում էին ներթափանցել արտաքին աշխարհի ներքին հարաբերությունների շերտերը, բացահայտել իրողությունների պատճառահետևանքային կապերը, գտնել առաջին հայացքից անհայտ օրինաչափությունները: Սիմվոլիզմը տաղուկալի իրականության մերժումն էր՝ հօգուտ մտրի և երևակայության աշխարհի: Նման «վերերկրյա» գաղափարները կերպարվեստում արտահայտվեցին ներկայի հանդեպ անտիկ աշխարհի գերապատվությամբ, իրականության փոխարինմամբ դիցաբանական, աստվածաշնչյան ու պատմական տեսարաններով, ընդունված կատեգորիաների (կյանք, մահ, սեր) ու հայտնի կերպարների (Քրիստոս, Ղև, կին) վերահիմնաստավորմամբ ու վերագնահատմամբ: Գեղարվեստական սիմվոլիզմը միաժամանակ ուներ մի յուրօրինակ հատկանիշ, որով առանձնանում էր այլ ուղղություններից: Մեկ ընդհանուր գաղափարախոսության շուրջ համախմբված արվեստագետներն ազատ էին իրենց տեսլականն արտահայտելու ամենազանագան արտահայտչամիջոցներով և նկարչալեզվով: Արդյունքում, առավել ոյուրին է խսել սիմվոլիստական երթետիկայի մասին, քան ծևակերպել սիմվոլիստական երկի գեղարվեստական մերժող սահմանումը: Այնուհանդերձ, նման փորձեր արվել են այս բազմարովանդակ ուղղության ծագման դեռ ակունքներից: Ըստ Ալբեր Օրյեի սիմվոլիստական երկը պետք է լինի գաղափարային, սիմվոլիկ, սիմբուլիկ, սուբյեկտիվ և դեկորատիվ<sup>17</sup>: Ուշագրավ է Վ. Բրանսկիի մոտեցումը. նա գեղարվեստական երկի տարրերի սիմվոլիստական բնույթը սահմանում է որպես կերպարների բարացածություն, գծանկարի և ծևի ոճավորում (պայմանականություն) կամ անորոշություն, պատկերի հարթայնություն և լուսաստվերի բացակայություն, գունաշարի պայմանականություն: Իսկ կառուցվածքի սիմվոլիստական բնույթին, ըստ նրա, հատկանշական են կոմպոզիցիայի դեկորատիվությունը, հրաժարումը նորմալ (կենտրոնական) հեռանկարից՝ հօգուտ անսովոր (զուգահեռ, հակադարձ) հեռանկարի, ինչպես նաև հորինվածքի «մշուշայնությունը», միևնույն հորինվածքում գեղարվեստական տարրեր ուղղություններին բնորոշ ոճերի միավորումը, տարածական «երաժշտականությունը», երբ գծից և գույնից բաղկացած հորինվածքը

<sup>17</sup> Stéphane G.-Albert Aurier, Le symbolisme en peinture. Van Gogh, Gauguin et quelques autres. Textes réunis et présentés par Pierre-Louis Mathieu, Caen, "L'Echoppe", 1991, pp. 26-27.

Անանեցվում է հնչյուններից բաղկացած երաժշտական հորինվածքի<sup>18</sup>: Թեև այս բնութագիրը չի կարող միանշանակ և սպառիչ լինել, այնուհանդերձ, այն համընկնում է սիմվոլիզմի դրոշնը կրող ստեղծագործությունների մեծամասնությանը: Գեղարվեստական սիմվոլիզմի առաջնորդներն են Գյուստավ Սորոն և Պիեռ Պյուվի դը Շավանը: Ուղղության գլխավոր ներկայացուցիչներն են Օոֆիլոն Ռեդոնը, Օրին Բյորդուին, Ժան Դելվիլը, Գուստավ Կիմտը, Առնոլդ Բյոկլինը, Ֆրանց ֆոն Շտուկը, Էրվարդ Սունկը, Ֆերդինանդ Շողլերը, Նարի Խունքը հիմնած Պոլ Սերյուգեն, Սորիս Դենին, Պոլ Ռանսոնը, Ժորժ Լակոմբը, Պիեռ Բոննարը, «Բասան խճի անդամներ Անրի դր Գրուն, Ֆերնան Կոնաֆը, Թեո վան Ուսելբերգը, Վիլի Ֆինչը, Յան Տորոպը, Ձեյմս Էնտորը և այլք:

**1.4. Սիմվոլիզմի ակրօ Ուսասատանում.** 19-րդ դարի վերջում՝ Ֆրանսիայում որպես գեղարվեստական ուղղություն ձևավորվելուց հետո, սիմվոլիզմը շատ արագ տարածում գտավ թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Եվրոպայում: Սիմվոլիզմի ակրօ հասավ նաև Ուսասատան, որտեղ գտավ իր համախնհերին և ջատագութերին: Ուսասական սիմվոլիզմը հանդես եկավ ոչ թե իբրև այս ուղղության եվրոպական տարբերակի պարզունակ կրկնություն կամ վերարտադրություն, այլ որպես մի երևույթ, որն ուներ խոր հիմքեր, լուրջ գաղափարական դրույթներ և մեծ ներուժ: Ուսև սիմվոլիստների համար Արքուր Շոպենի համար և Ֆրիդրիխ Նիցշեի կողքին որպես հոգևոր առաջնորդ էր գծագրվում նաև Վլադիմիր Սոլովյովը: Ուսասատանում սիմվոլիզմի դիրքերի ամրապնդմանը նեծապես նպաստում էին այս ուղղությանը համակռող ամսագրերը՝ «Վեսին» (Կշեռք), «Պերեվալը» (Անցելք), «Չղլուտոյե ռունոն» (Ուկե գեղմ), որտեղ հանդես էին գալիս գրական սիմվոլիզմի ավագ սերունդը ներկայացնող Վալերի Բրյուտվը, Դմիտրի Սերեժկովսկին, Վյաչեսլավ Իվանովը, Կոնստանտին Բալմոնտը, Ֆյորդ Սոլոգուրը, Երիտասարդ սերնից՝ Անդրեյ Բելին, Սերգեյ Սոլովյովը, Ալեքսանդր Բոլոկը և այլք: Գեղարվեստական սիմվոլիզմը Ուսասատանում ծավալվեց երկու փուլով: Առաջին փուլն ընդգրկում է 1880-1890-ական թթ. և, ինչպես եվրոպական սիմվոլիզմը, բնութագրվում է խիստ բազմազանությամբ: Սիմվոլիստներից ունաց հանար ստեղծագործությունների ներշնչման աղբյուր էին գրական երկերը, մյուսներն օգտվում էին պատմության էժերից, թիւ չէին նաև կրոնական թեմաներին նախապատվություն տվողները: Իրենց ոճով և աշխարհընկալմանը միմյանցից խիստ տարբեր էին նաև ուսև գեղարվեստական սիմվոլիզմի «հայրերը»՝ Միխայիլ Վրուբելն ու Վիկտոր Բորիսով-Մուսատովը: Ս. Վրուբելի պարետիկ պոռքելուն ներկայացնությամբ: Ի հակածիք Վրուբելի՝ անհանգստությամբ «բարախող» կտավների՝ Վ. Բորիսով-Մուսատովի երկերը բնորշվում են պոետիկ նորագեղությամբ: Ուսև սիմվոլիստների երիտասարդ սերնից արվեստում: «Մի կողմից տարբերակվում են Վրուբելի երևակայական պատկերները և դեկորատիվ գեղանկարչական կառուցվածքը, մյուս կողմից՝ Բորիսով-Մուսատովի նուրբ երկնագույն երփնագիրը և հոսուն ուրվագիծը»<sup>19</sup>: Սակայն սիմվոլիզմի երկրորդ ակրօ ժամանակ ուսւ նկարիչները հանդես եկան

<sup>18</sup> В. П. Бранский, Искусство и философия, Москва, “Янтарный сказ”, 1999, cc. 255-256.

<sup>19</sup> Camilla Gray, The Russian Experiment in Art: 1863-1922, Revised and enlarged edition by Marian Burleigh-Motley, London, Thames & Hudson, 1986, p 74.

միավորված՝ ձգտելով մշակել սիմվոլիստական էսթետիկային հարիդ գեղանկարչական ընդհանուր լեզու: Նրանք մտադիր էին գտնել գեղարվեստական արտահայտչամիջոցների այն համալիր համակարգը, որը ճանապարհ կհարթեր սիմվոլիստական գաղափարախոսության առանցքային դրույթները հնարավորինս լիարժեք կենսագործելու համար: Այս միտումների գեղարվեստական արտահայտումը հասարակության դատին հանձնվեց 1907թ. «Գոլուբայա ռոզա» խորագիրը կրող ցուցահանեսով, որին մասնակցում էին Ա. Արապովը, Պ. Կուզնեցովը, Ա. Սատվելով, Միջիոտի Եղբայրները, Ն. Ռյարուշինսկին, Ն. Սապոնովը, Ա. Սարյանը և այլք: «Գոլուբայա ռոզային» հաջորդեցին «Զոլոտոյն ռունոյի սպուն» (1908) և «Զոլոտոյն ռուն» (1909 և 1909-1910) նշանակալի ցուցահանդեսները, սակայն 1910-ական թվականներից սիմվոլիզմը Ուլսաստանում սկսեց տեղի տալ ավանդարդիստական ուղղություններին:

**Գլուխ երկրորդ  
ՍԻՄՎՈԼԻԶՄԻ ԴՐԱՄԱԿԱՐԱԿԱՆ 19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՁԻ ԵՎ 20-ՐԴ  
ԴԱՐԱՎԱՐՁԻ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ**

**2.1. Սիմվոլիզմի ներթափանցումը հայ գրականություն և արվեստ:** Ժամանակի հայ մամուլն ու սիմվոլիզմը. 19-20-րդ դարագիշտին Յայաստանը բարդ ու խճանքած պատմաքաղաքական իրավիճակում էր՝ պառակտված Ուլսաստանի և Թուրքիայի միջև: Այնուհանդեռձ, պետականությունից գորկ հայ ազգը կարողանում էր պահպանել իր լեզուն ու զարգացնել մշակույթը: Երիտասարդ մտավորականներից և արվեստագետներից շատերը կրթություն էին ստանում Ուլսաստանում և Եվրոպայում, որտեղ էլ ծանոթանում ու շփկում էին ժամանակի առաջադիմական հայացքների և գեղարվեստական նոր ուղղությունների հետ: Վերադառնալով հայրենիք՝ նրանք իրենց փորձն ու գիտելիքն ի սահման էին նույն հայ մշակույթին: Այսպես հայ արվեստ ներթափանցեց նաև սիմվոլիզմը:

Սիմվոլիզմը հայ գրականության մեջ չձևավորվեց որպես ամբողջական գրական ուղղություն, սակայն 20-րդ դարի սկզբում թե՝ արևմտահայ, թե՝ արևելահայ գրողների ստեղծագործություններում այս կամ այն չափով ունեցավ իր դրսնորումները՝ ծնելով հայ պոեզիայի մի շարք գոհարներ: Սիմվոլիզմին հարեցին Սիամանթոն, Լևոն Չանթը, Վահան Թեքեյանը, Տիրան Չրաբյանը (Խնորա), Յանան Նազարյանցը, Յովհաննես Չովհաննիսյանը, Ավետիս Նազարենյանը (Լեռնենց), տակավին երիտասարդ Շուշանիկ Կուրողինյանը և այլք: Սիմվոլիզմի տարրեր առկա են նաև Միսաք Մեծարենցի պոեզիայում: Իրենց ստեղծագործության մեջ սիմվոլիզմին հարեցին նաև հայ պոեզիայի գագաթներից Վահան Տերյանը և Եղիշեն Չարենցը: Վ. Տերյանը գրականություն մտավ «Մրնշաղի անուրջները» գրքույկով և դարձավ հայ արևմտյան հատվածի բանաստեղծական սիմվոլիզմի սկզբնավորողը: Նա պոեզիա բերեց նոր գեղագիտություն՝ մթնշաղի, շշուկների ու շրջյունների մի զարմանալի աշխարհ, աշնան ու տիսրության երանգներով: Ե. Չարենցի «Երեք երգ տիսրադալուկ աղջկան» գրքույկը, հետո արդեն «Տեսիլաժամեր», «Ճրո երկիր», «Լիրիկական բալլադներ» շարքերը, ապա «Կապուտաչյա հայրենիք» և «Դանթեական առասպել» պոեմները, որից հետո «Ծիածան» ժողովածուն սիմվոլիստական պոեզիայի մի ամբողջական համապատկեր են կազմում:

Յայ արվեստում սիմվոլիզմի տարածմանը խթանեց նաև 20-րդ

դարասկզբին հրատարակվող հայ պարբերական մամուլը: 1903թ. Սանկտ-Պետերբուրգում լույս տեսավ «Բանքեր գրականութեան եւ արուեստի» հանդեսը՝ Նիկողայոս Աղոնցի խմբագրությամբ: Ցավոք այս հանդեսը երկար կյանք չունեցավ, սակայն տվյալ ժամանակահատվածում նման հանդեսի ի հայտ գալը իսկ նշանակալի երևույթ էր: «Բանքերն» առանձնանում էր իր գեղարվեստական մակարդակով: Գրական, տեսական և գեղարվեստական բաժիններից բաղկացած հանդեսն ուներ ակնհայտ սիմվոլիստական ուղղվածություն, ինչի մասին են խոսում գրական (Վ. Թեքեյան, Մ. Կիուրցյան, Սիմանանը, Ա. դը Ռենյե, Ա. Սամեն) և գեղարվեստական (Է. Կարիեր, Ա. Բյուկին, Դ. Ռոստիդ, Ֆ. Ֆոն Շտուկ, Ա. Մարտեն, Օ. Ռոդեն, Լ. Բաքստ, Է. Շահին, Է. Մահտեսյան, Փ. Թերլենեզյան, Ա. Շաբանյան, Վ. Սոլրենյանց, Ե. Թաղևոսյան, Ա. Բաբայան) ընտրանին: Յանդեսի համար յուրատեսակ նշանաբանի արժեք ունի Նիկողայոս Աղոնցի «Գրական նշանաբան»: Դերկայան եւ սիմբոլիսմ» հոդվածը<sup>20</sup>: Այս նեօնածավալ հոդվածում հեղինակը ներկայացնում է սիմվոլիզմի պատմությունը, դրա սկզբնավորողներին ու հետողներին, սիմվոլիզմի դիրքերից ելնելով նշում բանաստեղծների և նկարիչների առջև դրված խնդիրները: Անդրադառնալով «դեկադենտ» բարի նշանակությանը՝ Աղոնցը հստակ սահմանազատում է սիմվոլիզմ և դեկադանս հասկացությունները: Յոդվածում Աղոնցը հանդես է գալիս որպես սիմվոլիզմի անթարուց ջատագով, իսկ հուզական, բանաստեղծական ոգով գրված անփոփիչ տողերը մանիֆեստային հնչողություն ունեն: Այնուհանդերձ, չնայած թեմայի նկատմամբ հոդվածագրի համակրանքով պայմանավորված որոշ սուբյեկտիվությանը, հոդվածն, անտարակույս, կարող է դասել սիմվոլիզմի ընդհանրական լավագույն ներկայացումների շարքին: 1908 թվականից Գարեգին Լևոնյանի խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակվող «Գեղարվեստ» գրական, գեղարվեստական, երաժշտական հանդեսը ևս որոշակիորեն տուրք էր տալս սիմվոլիզմին և մոդեռն ոճին: Յանդեսի էջերում հանդիպում ենք Վ. Տերյանի, Լեռնցի (Ա. Նազարետյան), Յ. Յակորյանի, Շ. Կուրդինյանի, Յովի Յովհաննիսյանի, Լեյլիի, Ա. Տիգրանյանի, Ե. Զարենցի սիմվոլիստական հնչերանգով բանաստեղծությունների և թարգմանությունների Բալմոնտից, Բյոյուսովից, հնչպես նաև մոդեռն ոճի և սիմվոլիզմի հարցերի մեկնաբանությունների<sup>21</sup>: Պատկերահանդեսում ներկայացվող արվեստագետների շարքում են Բյուկինը, Շտուկը, հայ արվեստագետներից՝ Վ. Մախովյանը, Յ. Չամշինյանը, Ա. Տեր-Մարտուրյանը, Յ. Գյուրջյանը, Գ. Բաշինջաշյանը, Ե. Թաղևոսյանը, Լ. Յազարապետյանը, Վ. Գայքենյանը և այլք: Այսպիսով, Եվրոպայում և հատկապես Ռուսաստանում սիմվոլիստական ալիքի տարածումը, հայ մամուլում այս ուղղության քննարկումները, սիմվոլիզմի ներթափանցումը հայ գրականություն, հնչպես նաև հայ արվեստագետների շատերի արտասահմանում կրթություն ստանալու փաստը, բարենպաստ հոյ նախապատրաստեցին հայ կերպարվեստում սիմվոլիզմի դրսնորման համար:

<sup>20</sup> Ա. Աղոնց, Գրական նշանաբան Դեկադան եւ սիմբոլիսմ // «Բանքեր գրականութեան եւ արուեստի», Ա գիրը, Սանկտ-Պետերբուրգ, 1903, էջ 153-173:

<sup>21</sup> Տէ՛ս՝ Յովհաննես Ակումեան, Գիտութեան և գեղարվեստի ցուցահանդես // «Գեղարվեստ», Թիֆլիս, 1908, № 2, էջ 119: Յովհաննես Սոլովեան, Յովող ոյժերը գրականութեան մէջ // «Գեղարվեստ», Թիֆլիս, 1909, № 3, էջ 119:

## **2.2. Սիմվոլիզմի դրսնորումը Վարդգես Սուլբենյանցի արվեստում.**

Տեսական հոդվածների, թարգմանչական փայլուն գործերի, թատերական և գորբային ձևավորումների հեղինակ հայ մեծատաղանդ Ակարիչ Վարդգես Սուլբենյանցն իր արվեստը «համեմեց» ժամանակի առաջադեմ ուղղությունների՝ մոդեռն ոճի և սիմվոլիզմի ձեռքբերումներով։ Այս ուղղությունների ազդեցությունները, փայլուն վարպետությամբ մշակված, բացահայտվում են Սուլբենյանցի գլուխգործոցներից «Ծամիրամն Արա Գեղեցիկի դիակի մոտ» կտավում (1899)։ Մ. Խորենացու «Դայոց պատմությունից» սերող այս երկը ընդհուպ նոտենուն է սիմվոլիստական թեմատիկային։ Զուգահեռները սիմվոլիզմի հետ ավելի են ընդգծվում գեղանկարչական ոճի շնորհիվ։ Սուլբենյանցն ընտրում է բարձր դիտակետ՝ ստեղծելով տպավորություն իբրև թե դիտորդը նայում է Ակարին այնպես, ինչպես հանդիսատեսն է հետևում թենում կատարվող գործողությանը։ Միաժամանակ հորինվածքն ունի ուղղահայաց ձգվածություն։ Այսպիսով, նկարը, անկախ իր պատմողական բնույթից, մեծիվ մասամբ ազատ է մոտմ գործող անձանցից և լրացվում ժարտարապետական դետալների ու կահավորանքի մանրանասն փոխանցումով։ Սարգոն Երկրորդի պալատի հարթաքանդակների Գիլգամեշի պատկերը, նոյն ժամանակաշրջանից խորսարադի մարդկային գլխով թևավոր ցուլը կրում են նաև խորհրդանշանային ֆունկցիա։ Իշտար աստվածուհին հետապնդում էր իր սերը մերժած շումերաքաղաքան դիցաբանական հերոս Գիլգամեշին։ Նկարի թեմատիկ առանցքը Շամիրամն է։ Նրա կերպարը կերտելիս Սուլբենյանցը բազմախոս չի գտնվել, սակայն Շամիրամի դեմքի արտահայտությունը և մարմնի դիրքն իրականում բացահայտում են իրավիճակի և հոգեվիճակի դրամատիզմը։ Շամիրամի կերպարը, կոնկրետության հետ մեկտեղ, իր մեջ ճակատագրական կոնց հավաքական կերպարի տարր է կրում։ Սիմվոլիզմին է հարում նաև Վ. Սուլբենյանցի մյուս գլուխգործոց՝ «Սալոմեն» (1907), որն առանձնանում է կերպարի ինքնատիպ մեկնաբանությամբ։ Երիտասարդ գեղեցկուիին կանգնած է միայնակ և հանգիստ։ Սեր առջև իր բաղծանքին հասած, սակայն այժմ միայն ունայնության զգացումով համակված կին է։ Դայ արվեստում «Սալոմեն» միանգամայն նոր խոսք էր ինչպես թենատիկ, այնպես էլ ոճական և հորինվածքային մտահղացմաբ։ Կենտրոնից փոքր-ինչ աջ հեռացած Սալոմեի ֆիգուրը ծառայում է որպես յուրատեսակ բաժանարար։ Ֆիգուրից աջ տեսնում ենք Սուլբենյանցին բնորոշ ասեղնագործ հյուսվածքներ։ Մինչդեռ ծախ հատվածը, բացառությամբ վերնամասի ֆրիզի, լիովին զերծ է մանրամասների ներմուծումից։ Դակադրելով զարդանախշային հագեցվածությունը ողորկ մակերեսին՝ նկարիչն ակներև խիզախտություն է ցուցաբերում։ Սակայն հենց նման գեղանկարչական լուծման շնորհիվ է, որ գլխավոր կերպարը գտնվում է ծիշտ համարդության մեջ ժարտարապետական միջավայրի հետ։ Այս կտավում Սուլբենյանցի ինքնատիպ նկարելառն ու երփնագիրը, արտասովոր կերպով միահյուսվելով մոդեռնի ու սիմվոլիզմի ձեռքբերումներին, ստեղծել են հայ արվեստի իրական գոհարներից նեկը։ Սիմվոլիզմի համաշխարհային պատկերասրահն իրավացիորեն կարող է համարվել Վարդգես Սուլբենյանցի «Թախիծ» (անթվագիր) կտավով։ Իր մտահղացման իրականացման համար նկարիչն ընտրել է նեղ և ուղղաձիգ հորինվածք, որում գետեղել է կանացի ֆիգուրը՝ ամբողջ հասակով։ Սուլբենյանցը, սակայն, խուսափել է ֆիգուրի կենտրոնական տեղաբաշխումից։ Կոնց կերպարը կենտրոնական առանցքից

ձախ է փոխադրված՝ այնպես, որ նույնիսկ հատում է նկարի շրջանակը: Կոնց կերպարը լուծված է մողեռնին ներկատուկ հարթային-դեկորատիվ ոճով: Նկարիչը ներկայացնում է ոչ թե իրական կնոջ, այլ անծնավորված հոգեվիճակ: «Թախիծը», անխոս, դասվում է ռոմանտիկական և սիմվոլիստական կերպար-խորհրդանշերի շարքին: Թեմատիկ առնամբ «Թախիծին» հարում է սուրբենյանցական «Սպասումը» (1900): Սակայն դա միայն առաջին տպավորութամբ. գեղարվեստական լուծումներով այս երկու աշխատանքները խիստ տարբեր են: Եթե «Թախիծում» մենք հանդիպում ենք յուրահատուկ կոմպոզիցիոն լուծման, մողեռնիստական նկարչական գործիքներով և խորհրդապաշտական ոգով, ապա «Սպասում» կոտավում նկարիչն առավել «ապահպանողական» է: Վստեղ բնանկարի ֆոնին նստարանին նստած հանդերձներով պարուրված կնոջ կերպարը, անտարակոյս, զիջում է ակնհայտորեն ավելի ուշ թվագրում ունեցող «Թախիծին»: Քետաքրքրական է, որ քատերական ծևավորումներում ու գրքային նկարազարդումներում, չնայած որոշ դեպքերում նյութի տրամադրած լայն հնարավորություններին, Սուրբենյանցը չի դառնում սիմվոլիզմի և մողեռնի միանշանակ ջատագով:

Ուսումնասիրելով Վարդգես Սուրբենյանցի արվեստում սիմվոլիզմի դերը, հանգում ենք հետևյալ մտքին. սիմվոլիզմից, ինչպես և մողեռն ոճից հայ նկարիչը փոխառել էր որոշ թեմատիկ նախընտրությունները և գեղարվեստական մերժմեր՝ առանց ընկղննելու այս ուղղությունների գեղագիտական հայացքներում և գեղարվեստական լեզվում հանդիպող ծայրահեղությունների հորձանուտը: Մողեռնի գծերը հայ նկարչի արվեստում հանդես են գալիս անսովոր դիտակետով, ոճավորված օրնամենտի հարուստ կիրառմամբ, կոմպոզիցիայի ասիմետրիկ կառուցմամբ, հարթայնության ձգտմամբ: Դիցաբանական և աստվածաշնչան թեմաների ընտրությունը, *feettie*-ի ներնուծումը հայ արվեստ, կերպար-խորհրդանշերի կերտումը Սուրբենյանցի արվեստում սիմվոլիստական շունչն են մատնացույց անում: Սակայն նկարիչը միանգամայն անտարբեր է մնում երազի և երևակայության, առավել ևս վախի և սարսուռի աշխարհի նկատմամբ: Թե՛ աշխարհնկալմամբ, թե՛ գեղագիտական հայացքներով Սուրբենյանցը հեռու էր սիմվոլիստական էսետիկայից: Նրան չգրավեցին նաև սիմվոլիստների գեղարվեստական այն մեկնարանությունները, որոնց սկզբնավորմանը նա կարող էր ծանոթանալ Գերմանիայում ուսանելու տարիներին: Ո՛չ Առողջ Բյոնկինի անհանգստությամբ համակված կտավները, ո՛չ Ֆեռդինանտ Շողելերի անեացած կերպարները, ո՛չ ֆոն Շտուկի մարմնականի ակնհայտ գերակայամամբ գործերը չեն ոգեշնչել Սուրբենյանցին: Փոխարենը նկարչին հոգեհարազատ են անգլիական պրեռաֆայելիտների ստեղծագործությունները: Կարդգես Սուրբենյանցը, շնորհիվ գեղանկարչական մեծ վարպետության և ժամանակին համընթաց շարժվելու ունակության, կերտեց մողեռն ոճի և սիմվոլիզմի տարրերով ներթափանցված գլուխգործոցներ և դարձավ հայ կերպարվեստում այս ուղղությունների առաջին հետևողուներից:

**2.3. Սիմվոլիզմի դրսնորումը Եղիշե Թաղևոսյանի արվեստում.** Հայ արվեստում իմպրեսիոնիզմի հիմնադիրներից և լավագույն ներկայացուցիչներից Եղիշե Թաղևոսյանն իր ստեղծագործական կյանքում ակնհայտողն ոգեշնչվել է նաև սիմվոլիզմից: Իրեն շրջապատող իրականությունից առաջ ընթացող Թաղևոսյանին հոգեհարազատ էր գորշ ներկայացուցիչ փախուստի դիմող

սիմվոլիզմը: Դայ նկարչի արվեստում այն յուրօրիհնակ թելով է ծավալվում: Տենչ դեպի անցյալը, իհացմունք իին դարերի գեղեցկությամբ, անդրադարձ ավանդապատումներին, աստվածաշնչան ու պատմական դեպքերին, զգացական աշխարհի մեծարանք՝ սիմվոլիստական ուղղությանը ներհատուկ այս բնութագրերից յուրաքանչյուրին կարող ենք հետևել Եղիշե Թադևոսյանի արվեստում: Թադևոսյանի աշխատանքների մի մասի անթվագիր լինելու պատճառով դժվար է հստակ նշել սիմվոլիզմի առաջին արձագանքը նկարչի արվեստում: Փոխարենք կարելի է առանձնացնել սիմվոլիստական այն թեմաներու ու գծերը, որոնք արտահայտվում են թագևորական երկերում: Դիցաբանական, քրիստոնեական և պատմական կերպարներն ու սյուժեները սիմվոլիզմի թեմաների հենքն են: Այս թեմաներին քանից անդրադարձում է Եղիշե Թադևոսյանը («Գրիգոր Լուսավորչի տեսիլը», «Տորը Անգեղ», «Ավան աղան», «Հոգեհաց», Արտաշեսի մահը», «Արշակ և Փառանձեն»): Կես-իրական, կես-անրօնային, կես-երկրային, կես-աստվածային. այսպիսին էր արդեն իսկ կորսված անտիկ աշխարհը սիմվոլիստների համար: Այս աշխարհի նկատմամբ դույզն-ինչ տրտմագին կարողութ են առլեցուն թագևորական «Սփոփանքը» (1901) և «Անուրի բողոքը» (1921): Թադևոսյանի արվեստում կենտրոնական դիրք ունի նաև ստեղծագործ անհատի կերպարը, որին համդիպում ենք «Ֆիդիասն ու Զևսը» (1908) գործում, «Պուետ» եսքիզում (1923), «Vox Pacis» (Զայն խաղաղության, 1910) անավարտ կտավում և, իհարկե, նկարչի գլուխգործոցում՝ «Ճանճարն ու ամրոխը» կտավում (1909): Առանձին ուշադրության է արժանի «Կոմիտասը Էջմիածնի լճի ափին» (1894) նկարը: Կոմիտասը պատկերված է լճի ափին նստած, մեջքով դեպի դիտողի: Մենք կարող ենք տեսնել միայն նրա կիսադեմը, սակայն դա չի խանգարում կրահելու այն մելամաղձուտ տրամադրությունը, որ հաճակել է կոմպոզիտորին: Միևնույն ժամանակ կտավը հետաքրքրական է մեկ այլ տեսակետից՝ իմաստային երկորորդ շերտով: Թեև գլխավոր երրուն անձնավորված է, սակայն նրա պատկերման ձևը որոշակի առօւնով հակադրվում է կոմկրետացմանը: Կոմիտասի կերպարը վերանձնային բնույթ է ստացել՝ դաշնալով, կարծես, համամարդկային տրամադրության ու հոգեվիճակի հայելի, մարդ-բնություն անքակտելի կապի խորհրդանշից: Ճատկանշական է նաև վարդապետի պատկերումը լճի ափին: Զայային թենան մշտապես խաղարկվում է սիմվոլիստների ստեղծագործություններում: Ցայտուն զգայական շունչ ունեցող «Կոմիտասը Էջմիածնի լճի ափին» գործն իր մեջ երաժշտականություն է կրում: Այս վերջին հատկանիշը բնորոշ է Թադևոսյանի ստեղծագործություններից շատերին: Դրա մասին խոսում է նաև Ռ. Դիամբյանը «Զանգյուլումին» անդրադարձանալիս<sup>22</sup>: Մենք, մշուշային տոներով վրձնված «Զանգյուլումը» (1907) իրենից բխող հանգստությանք Պյուսի դը Ծավամի որմնանկարներն է հիշեցնում: Երաժշտական կերտվածք ունի «Սոնետը» (1909): Բաց ծովում հայտնված գոնորլան, ջուրակ նվազող երիտասարդը, նրան հակված ճերմակագեստ կինը, ալեկոն ծովն ու ծիածանն ավելի անուրջ են, քան իրականություն: Սիմվոլիստական բնորոշ անվանում ունի «Իմ անուրջներից մեկը» (1905) կտավը: Եթե չիներ նկարի վերնագիրը, այն կարելի կլիներ շփոթել

<sup>22</sup> Տե՛ս Ռ. Գ. Դրամպյան, Եղիշե Տաթևոսյան, Մոսկվա, “Искусство”, 1957, с. 42.

սովորական բնանկարի հետ: Սաղարթախիտ ծառերը, պարսպապատ բարձրադիր ամրոցը, ոլորապտույտ կածանը, ժայռից բխող աղբյուրը, նարդկային ֆիգուրներն առաջին հայացքից իրական տպավորություն են թողնում: Միայն նկարն ուշի ուշով դիտելիս նկատելի են ամրոցի զարմանահրաշ ճարտարապետությունը և բնանկարի անհրական գուգորդումը: 1910-ականներից հետո սիմվոլիզմի տարրերը Եղիշե Թաղենոսյանի արվեստում երբեմն նահանջում են, երբեմն էլ նորովի ժայթքում, ինչպես, օրինակ, «Անտիկ տեսիլում» (1921): Այսուղեղ, Երազի ննան, նիհայուսված են իրականն ու երևակայականը: Նկարը փառաբանումն է մի ժամանակի ու մի աշխարհի, որ գոյություն ունի գեր նկարչի երևակայության մեջ: Սա սիմվոլիզմի այն բնեղն է, որ մի կողմն է դնում իրականությունը և մեզ շրջապատող աշխարհից վեր մեկ այլ կյանք է փնտրում:

19-20-րդ դարերի սահմանագիշին, երբ Եղիշե Թաղենոսյանը ստեղծում էր իր՝ սիմվոլիստական ոգով գործերը, Եվրոպայում սիմվոլիզմի ալիքը դեռ չեր նարել, իսկ Ռուսաստանում ամենաեռուն ժամանակն էր ապրում: Այսպիսով, հայ նկարիչը Եվրոպացի կամ ոռուս սիմվոլիստներից որևէ մեկի հետնորդը չեր: Խոսելով Թաղենոսյանի արվեստում սիմվոլիզմի արտահայտման նասին, նախևառաջ պետք է նշել, որ նա փոխ առավ սիմվոլիզմի թեմաներից ու տեսական դրույթներից մի հատված միայն, սակայն մշակեց դա յուրովի: Սիմվոլիզմը Թաղենոսյանի արվեստում ազատության մղող մուսայի դեր կատարեց՝ տալով նրան կարծրատիպերից ազատվելու հնարավորություն, իրականությունից վեր բարձրանալու կարողություն, աճէ աշխարհը տեսանելի դարձնելու հմտություն:

**2.4. Սիմվոլիզմը Մարտիրոս Սարյանի արվեստում.** Դայ կերպարվեստում սիմվոլիզմն իր առավել մաքուր դրսեւորմն է գտել հայ արվեստի մեծագույն վարպետ Մարտիրոս Սարյանի ստեղծագործական վաղ շրջանում: Նկարչի «Դեքիարներ և Երազներ» շարքում (1903-1909) արտացոլված է ոռուս արվեստում այդ ժամանակ տիրող սիմվոլիստական ոգին: Ասվածն ակնհայտ է նախ թեմատիկայի առնամբ. շարքի գործերը փոխկապակցված են անխօելի թելով, ինչն է՝ փախուստ առօրեականից դեպի իրականի և երևակայականի համադրմանը կերտվող երազ-աշխարհ: Շարքում Սարյանի գեղանկարչական լեզուն և համահունչ է սիմվոլիզմին<sup>23</sup>: Թենատիկ առումով «Դեքիարներ և Երազներ» շարքը, ինչպես և բխում է անվանումից, ներկայացնում է մի երազ-աշխարհ՝ «բնակեցված» արքայադաստրերով ու թագավորներով, գեղանի աղջիկներով ու երիտասարդ տղաներով, թռչուններով ու վիթերով («Դարեմի պարտեզներում», «Աղքան արքայադաստեր հետ: Դեքիար», «Ծաղի մոտ: Դեքիար», «Դեքիար», «Աղքայադաստր», «Աղքայուրի մոտ: Արագածի լանջերին», 1904, «Ծաղկող սարեր: Ախուրյանի կիրճում», «Փերիների լիճը», 1905, «Դեքիար: Սեր», 1906): Նույնիսկ դիմանկարչական ժանրում Սարյանը չի վախենում իրականի և անիրականի միանգամայն համարձակ համադրումից. «Տիկին Աֆրիկյանի դիմանկարում» (1905) հերոսուիկն տարրալուծվում է դեքիարային աշխարհում: «Դեքիարներ և Երազներ» շարքում առանցքային տեղ

<sup>23</sup> «Երկողող սերնդի» սիմվոլիստների գործերը կարծու ստեղծագած լինեն երաժշտական մեկ տոնայնության մեջ, ինչի խոսուն վկան է «Գոլուբայ ոռզայի» ցուցահանդեսը, որտեղ Պ. Կուզմեցովի, Պ. Ուտկինի, Ն. Սապունովի, Ս. Սոլոկինի, Ա. Վրապավի և այլոց շարքում ներկայացավ նաև Սարյանը՝ ջրաներկով և տեմպերայով կատարված 15 աշխատանքներով:

ունի «Դեքիաթ: Սեր» (1906) նկարը: Ի տարբերություն մյուս ստեղծագործությունների, այստեղ առաջին պլան են մղված մարդկային կերպարները: Նկարի կենտրոնում համբուրգող գոյզն է: Այստեղ են նաև վիթք, դայլայլող ստիճակը, կամարի դեր կատարող ծառերը, ծովն ու ճերմակ առագաստով նավակը, ասել է թե մեզ արդեն ծանոթ բնության ներդաշնակությունը: Սակայն նկարի լայրմոտիվն այս անգամ մարդն է ու ամենամարդկային զգացումը՝ սերը: 1903-1906թ. ջուններկով և գուաշով կատարված աշխատանքներին 1905-1908թ. փոխարինման են գալիս տեմպերայի կիրառությամբ գործերը, ինչն իր հերթին հանգեցնում է նկարչակեզզի վերակերտմանը: Այժմ ստեղծագործությունների արտահայտչականության հիմքը կազմում են գունային բժերի միջոցով նողելավորվող կերպարները և հարթային ֆոնի օրնամենտալ-դեկորատիվ կազմակերպումը: Բաց, լուսաշղող, նույնիսկ բափանցիկ երանգների և կերպարների նույր մողելավորման փոխարեն նկարիչն այժմ նախընտրություն է տալիս ինտենսիվ, վառ, հաճախափուր լուսին, որն ընդգծում է գուներանգները և բացահայտում հակադրությունները, իսկ բաց և մուգ գույների սահմանազատումը կատարվում է կտրուկ՝ դրանով իսկ հիշեցնելով ֆովիստներին («Բանաստեղծը», 1906, «Նունենու վրա», «Գիսաստղ», «Կինը գունագեղ գործվածքներով», «Երեկոն լեռներում», «Հովազներ», 1907, «Ծովի մոտ: Սֆինքս», «Զրիդի մոտ: Տապ օր», 1908): Այս շրջանի որոշ գործերում («Ծառերի տակ», 1907, «Ինքնանկար», 1909) արդեն իսկ հանդիպում ենք այն գունաշարին, որը հետագայում պետք է հայտնի դառնար «սարյանական» անվանը:

Սարյանի գեղագիտական հայացքները ևս մի շարք ընդհանրություններ ունեն սիմվոլիզմի էսթետիկայի հետ: Սարյանական աշխարհընկալման առանցքը են սերը և հավատը, հավատը մարդ արարածի նկատմամբ, անհուն սերը դեաի բնությունն ու արևը<sup>24</sup>: Նկարչի գեղագիտական հայացքների հաջորդ հիմնարարը արվեստի ընկալումն է իբրև լուսավորող և երջանկություն պարզնող ուժի: Բնականաբար իր սիմվոլիստական գործերում Սարյանը ոչ մի դեպքում չէր կարող դիմել հուսահատության, միայնության, կասկածի, վախի կամ մահվան տրամադրությանը: Սարյանի համար արվեստը կյանքից փախչելու ձև չէ, այլ հրականության մեջ ապրելու և այդ իրականությունը վերակերտելու բանալի: Այս միտքը դժվար չէ հետևել Վ. Սոլովյովի հայացքներում, երբ արվեստին է շնորհվում բնությանը ոչ թե պարզապես ընդօրինակելու, այլ շարունակելու, իսկ հանուն էսթետիկական խնդիրների նույնիսկ շտկելու առաքելությունը<sup>25</sup>: Սարյանական աշխարհայացքն ընկալելու և այնտեղ սիմվոլիստական աշխարհնեկալումից եկող գժին հետևելու համար կարևոր է «Գիսաստղ» (1907) գործում պատկերված խորիդավար կերպարի՝ մեկաչքանի, վեղարավոր անձի վերաբերյալ նկարչի բացատրությունը: «Երևակայական արարած է: Նա տիեզերական երևույթների վկան է, որին հայտնի են տիեզերքի

<sup>24</sup> Սարյանական աշխարհնեկալման մեջ առանցքային տեղ գրադեցնող արևի պաշտամունքը ներհատուկ էր որևէ գրական սիմվոլիզմին, հիշենք թեկուզ Կ. Բայմոնտի «Լինենք գերը արև» քանատեղությունների ժողովածուն կամ ուսեւ գեղի եւսից Արևի աշխարհ ճանապարհող Ա. Բելու «Արգոնավորներին»:

<sup>25</sup> Ст. у. История эстетики. Памятники мировой эстетической мысли. В пяти томах. Том четвертый. Первый полутом: Русская эстетика 19 века, Москва, "Искусство", 1969, сс. 564, 570.

գաղտնիքները: Դա պետն է: Դա ես եմ»<sup>26</sup>: Զուգահեռը սիմվոլիստական թեոլոգիայի տեսության հետ ակնհայտ է: Այսպիսով, Սարտիրոս Սարյանի արվեստը սկսեց ծևավորվել և զարգանալ այն ժամանակ, երբ ռուս իրականությանը համակել էր սիմվոլիզմի ոգին: «Դեքիարներ և երազներ» շարքի վաղ գրքերում սարյանական արվեստը լիովին համահունչ էր «Գոլուբյա ռոզայի» անդամների գեղարվեստական մոտեցումներին: Սակայն, երբ 1907 թվականից զգացվեց գեղարվեստական այդ լեզվի փակությանությունը, Սարյանը վերահճաստավորեց իր արվեստը՝ ժամանակի իրամայականին համապատասխան: Նրա ստեղծագործությունների աստիճանական վերափոխումն ի կատար ածվեց համաշխարհային արվեստի ծեռքբերումներին ազգայինի հավելման և, գլխավորապես, իր՝ խորապես գիտակցված և ապրված աշխարհներկալմանն ու գեղագիտական հայացքներին հետանուտ լինելու միջոցով: Այս ամենի շնորհիկ Սարյանի արվեստն անթերի վարպետության հետ մեկտեղ ձեռք բերեց իր անկորկնելի դիմագիծը:

**2.5. Սիմվոլիզմը Հակոբ Գյուրջյանի արվեստում.** Հակոբ Գյուրջյանի ստեղծագործությունների օրինակով սիմվոլիզմն իր հետքը թողեց նաև հայ քանդակագործության մեջ: Սիմվոլիստական թեմատիկան Գյուրջյանի քանդակներում բավական հարուստ դրսորում ունի. այստեղ են բիբլիական կերպարներ (Եվա, Թրիստոս), դիցարանական հերոսները (Դիանա, Լեդա, Դև), *femmete fatale*-ը (Սալոմե, Կլեոպատրա) և սիմվոլիստների նախընտրելի կերպարների անդամները (Երիտասարդություն, Յուսահատություն): Հակոբ Գյուրջյանի սիմվոլիստական թեմատիկայով գործերի շարքում առաջինը «Դև» (1912): Այս թեմայով մի շարք էսքիզներից հետո (պահպանվել են գիպսե և թրծակավե երեքական էսքիզ) որպես վերջնական տարրերակ ընտրված գիպսե Դևը կիսանդրի է: Խիստ ընդգծված է ուսերի թերքվածքը: Գլուխը հակված է ծախս ուսին: Դևի աչքերը փակ են, բայց եթե նույնիսկ նա քնած է, ապա ոչ խաղաղ քնով: «Դևում» կիրառվող հորինվածքից Գյուրջյանն արդեն իսկ օգտվել էր իր վաղ աշխատանքներից մեկում՝ «Մարգարիտ Շիրվանզադեի դիմաքանակում» (1910), սակայն սպիտակ ողորկ մարմարից կերտված այս արձանում դա առավելապես գեղագիտական բնույթ է կրում: Մինչդեռ Դևի քանդակում թե՛ մարմնի ծևախեղման և թե՛ արծաթքարոնզավուն խազածածկ մակերուսւի միջոցով քանդակագործը վեր է հանում կերպարի հոգեկան տանջանքը, նրա ներքին խոռվը: Յորինվածքային առօսնով գյուրջյանական Դև մոտենում է նաև Օդիլոն Ռեդոնի «Փակ աչքերով» խորագիրը կրող նկարներին, հատկապես 1899-ին ստեղծված տարրերակին: Ներքին տանջանքն արտաքին ձևաչափերում արտահայտելու նիստումը դրսարկում է նաև Թրիստոսի կերպարում («Մեռած Թրիստոս», 1914): Թե՛ Դևի քանդակում, թե՛ Թրիստոսի կերպարում կիրառված հորինվածքային լուծումը՝ հոգեկան լարումից բխող գլխի շրջադարձը, կարելի է ասել, դառնում է Գյուրջյանի նախընտրելի արտահայտչամիջոցներից և հաճիբար նաև Վահան Տերյանի դիմաքանդակում (1919): 1920-ական թվականներին Գյուրջյանը բազմիցս անդրադառնում է դիցարանական կերպարների՝ ստեղծելով բոլորաքանդակների և բարձրաքան-

<sup>26</sup> Մարտիրոս Սարյան. 1880-1972, Հեղինակ-կազմող՝ Ծահեն Խաչատրյան, Երևան, «Փրիմբինֆո», 2011, էջ 32:

դակների մի ամբողջ շարք («Եվա», 1919-1920, «Լեդա», «Մղձավանջ», «Դիանա», 1922): Եթե Դկի և Քրիստոսի կերպարներում Գյուղօյանը մոտենում է հոգերանական դիմաքանոնակին, իսկ դիցարանական սյուժեներով՝ բարձրաքանդակները գնահատելի են գեղարվեստական լուծումներով, ապա «Կլեոպատրա» (1924) և «Սալոմե» (1926) քանդակներում մկանելի է թե՝ մեկի և թե՝ մյուսի առկայությունը: *Femme fatale* կլեոպատրան և Սալոմեն ներկայացված են մերկ, մարմնի ֆրոնտալ և զիմի կիսատեմ դիրքով: Ի տարբերություն կլեոպատրայի հաճախակի կիրավողի պատկերագրությանը, երբ նա ներկայացվում է մահանալիս, Գյուրջյանը կերտել է առինքնող բագուհու կերպարը՝ կարծես ընդգծելով նրա անողորմ վեհությունը: Նմանատիպ շնչով է պարուրված նաև Յովիհաննես Սկրտչի գլուխը ծեռքին պահած Սալոմեն՝ հայտնի բրոնզե և բելզիական սև գրանիտե տարբերակներով: Այստեղ Սալոմեի արտաքուստ հանգստության ներք բարնված է զերեր ներքին լարումը, ինչի մասին վկայում է զիմի կտրուկ շրջադարձը: Սիմվոլիստական ոգով կերպար-խորհրդանմշերը, որպիսիք են «Յովիհանստություն» («Սատած բնորորիկի», 1923), «Երիտասարդություն կամ մարմին» (1933), «Երիտասարդություն կամ ոգի» (1934) գործերը, առանձնանում են նրբին, սահուն ձևերով: Այստեղ, չունենալով սյուժետային պարտադրանք և հոգեբանական մկանագրի կերտման խնդիր, Գյուրջյանը լուծում է էսքետիկական խնդիրներ: Սիմվոլիստական ուղղության աղբեցությունը Յակոբ Գյուրջյանի արվեստում, բացի զուտ թեմատիկ ընտրությունից, արտահայտվում է նաև գեղարվեստական մեթոդում: Եթե քանդակագործի արվեստի դիտարկման համար որպես հիմք ընդունենք տարրերի սիմվոլիստական բնույթի մասին Վ. Բրանսկու վերը մեջբերված սահմանումը, կտևնենք, որ Գյուրջյանի քանդակներից շատերում առկա են սիմվոլիստական երկին բնորոշ կերպարների բարացածությունը, ձևի ոճավորումը, պատկերի հարթայնությունը: Բացի այդ, Գյուրջյանը զարպենորեն օգտվում է սիմվոլիստական քանդակին բնորոշ բազմագունությունից, մասնավորապես բարձրաքանդակներում: Արվեստագետը լայնորեն կիրառում է նաև սիմվոլիստական երկին բնորոշ կերպարների դրացածությունը, ձևի ոճավորումը, պատկերի հարթայնությունը, մոնումենտալությունը ու հորինվածքը<sup>27</sup>: Այսպիսով, սիմվոլիստական ուղղության ազդեցությունը Գյուրջյանի արվեստում հանդիս է գալիս մի քանի մակարդակներում: Նախառաջ դա ընտրված թեմատիկան է, ապա սիմվոլիստական գեղարվեստական մերորդի կիրառումը և, իհարկե, քանդակին վերաբերող գեղագիտական հայացքները:

#### Գլուխ երրորդ

#### ՍԻՄՎՈԼԻԶՄԻ ԱՐՂԱՎԱՆՔՆԵՐԸ

#### 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ կերպարվեստում

սիմվոլիզմի դրսևումներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է նշել նաև Գեորգի Յակովլովի և Վահրամ Գայֆեճյանի անունները: Նրանց ստեղծագործությունները թեև դժվար է որակել որպես զուտ սիմվոլիստական, այնուհանդերձ այդ ուղղությունը որոշակի դեր է խաղացել այս արվեստագետների գեղանկարչական լեզվի ձևավորման գործում: Այսպես, Յակովլովի ստեղծագործություն-

<sup>27</sup> Տես. Պ. Դրամպյան, Ակոپ Գյորդյան, ս. 76.

Ներում չենք հանդիպում սիմվոլիզմի հիմնական կերպարներին ու մշտական թեմաներին, ինչպիսիք են դիցաբանական ու աստվածաշնյան կերպարները, *femmes fatales*-ը, կերպար-խորհրդանշերը, առինքնող անուղղները կամ սահմուկեցուցիչ մղձավանջները (թերևս, բացառություն են կազմում «Ամազոնութիւնների կրիվը», 1910 և 1912, և «Ֆանտազիան», 1910-ականներ): Փոխարենը, յակուլովան կտավներում հանդիպում է տեսամելի աշխարհից այն կողմ սրուսելու սիմվոլիստական հակումը: Տակավին երիտասարդ նկարչի հետաքրքրությունը սիմվոլիզմի նկատմամբ ծևավորել էր Յակուլովի քննական հայացքը շրջակա աշխարհի հանեսա: Ինչպես սիմվոլիստները, Յակուլովը և փորձում էր արտաքին ծևաչափերից անոին գոյություն ունեցող կենսական հարաբերություններին հասնել ու արտացոլել դրանք իր ստեղծագործություններում: Սակայն, եթե փախուստը ծանծրալի աշխարհից սիմվոլիստներին բերում էր անջային պատրանքների գիրկը կամ «շարսում» պատմական ու առասպելական խորքերը, Յակուլովը կյանքի ներքին, թաքնված հարաբերությունները ձգուում էր գտնել ինը նույն շրջակա, այդքան ծանոթ աշխարհում: Նկարիչը մտնում է սիմվոլիստական աշխարհ, սակայն դուրս է գալիս այնտեղից ոչ որպես սիմվոլիստ: Յակուլովը թե՛ ժամանակաշրջանով, թե՛ աշխարհներկալմամբ սիմվոլիզմից առաջ էր ընթանում: Այս պարագայում ավելի ճիշտ է խոսել սիմվոլիզմից ստացած ներշնչանքի, այլ ոչ թե կոնկրետ ազդեցության մասին:

Յայկական սիմվոլիզմի առավել ցայտուն օրինակներից մեկը պատկանում է Վահրամ Գայֆեճյանի վրձնին: «Սալոմե» (1909) կտավի ստեղծման գաղափարը նկարչին տվել էր նրա ճեմարանական տարիների ընկեր Վահրամ Տերյանը<sup>28</sup>, հայ գրական սիմվոլիզմի խոշորագույն ներկայացուցիչը, ով նաև Օսկար Ուայլի «Սալոմե» պիեսի թարգմանիչն էր: Գայֆեճյանը պատկերում է Սալոմեին այն ժամանակ, երբ նրան են բերել Սկրոտիչ գլուխը: Կիսամերկ Սալոմեն պարկած է, ձեռքին՝ սկուտեղի վրա դրված Յովհաննես Սկրոտիչ գլուխը: Նկարիչ կերտած կերպարը հավատարիմ է պիեսում հանդիպող «բնօրինակին»: Գայֆեճյանի Սալոմեն մեր առջև հարուստ է որպես կիսացնոր ժափոռվ *femmes fatales* էրոտիզմի ընդօճքած ենթաշերտով, և մոտ է այս կերպարի՝ ելորպական պատկերագործյան մեջ ընդունված տարբերակներին, հատկապես Ֆրանց Ֆոն Շտուկի և Լյուիս Լևի-Շյուլդերի կերտած կերպարներին: Գայֆեճյանի այս կտավը համեմատական է նաև O. Ուայլի պիեսի՝ Օքրի Բյորդսլիի նկարագրադրումներից մեկին, որտեղ դիվային գծերով օժտված Սալոմեն ձեռքում պահում է Մկրտչի գլուխը: Այնուհանդերձ, սիմվոլիզմի նման՝ անմիջական ու ամիսառն ազդեցությունը Վահրամ Գայֆեճյանի արվեստում, այնուհանդերձ, եզակի բնույթ ունի: «Դեկորատիվ մոտիվներ» ու «Գունային կոմպոզիցիաներ» շարքերում, սիմվոլիզմի հետ որոշակի ընդհանրությունների հետ մեկտեղ, Գայֆեճյանի գեղանկարչական լեզուն ավելի անկաշկանդ է, քան տվյալ ուղղության ընձեռած հնարավորություններն էին: 1910-ական թվականներին սիմվոլիզմի ազդեցությունը ավելի է նահանջում, իսկ հետագայում՝ վերջնականապես մարում:

<sup>28</sup> Տե՛ս. Վագրամ Գայֆեճյան. 1879-1960. Գրաֆիկա, րիսոն. Կատալոգ, Երևան, Издание второе (авторское), 2013, с. 14.

Այսպիսով, 19-րդ դարավերջին և հիմնականում 20-րդ դարասկզբին սիմվոլիզմը, որոշակի դիրքեր գրավելով հայ կերպարվեստում, հայ նկարիչների համար երթեմն վերածում էր հավատանքի, երթեմն էլ որպես կարճատև ներշնչանքի աղբյուր էր հանդես գալիս, երթեմն դարձնում էր առանձին շրջանի կամ շարքի նկարագիր, երթեմն էլ ակնթարթային բնույթ էր կրում: Այս անենով հանդերձ սիմվոլիզմը հայ կերպարվեստում, ձեռք բերելով ազգային աշխարհայացքին ու գեղագիտական հայացքներին բնորոշ գծեր, տվեց յուրատեսակ և բարձրարժեք օրինակներ՝ հարստացնելով սիմվոլիզմի համաշխարհային պատկերասրահը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրոպայում և Ռուսաստանում մեծապես տարածված սիմվոլիզմը 19-20-րդ դարագլխին իր արտացոլումը գտավ նաև հայ կերպարվեստում: Սիմվոլիզմի՝ որպես գեղարվեստական ուղղության համապարփակ ուսումնասիրությունը և հայ նկարիչների արվեստում այս ուղղության զանազան դրսևումների բացահայտումը բերում են հետևյալ եզրահանգումների.

1. Սիմվոլիզմի ծագման նախադրյալների, դրա տարածման օրինաչափությունների, էսթետիկական հայացքների և լավագույն ներկայացուցիչների արվեստի ուսումնասիրությունը հնարավոր է դարձնում քննել ուղղության առանձնահատկությունները հայ կերպարվեստում:

2. 19-րդ դարավերջին նորարարական այլ ուղղությունների հետ հայ (տվյալ դեպքում՝ արևելահայ) արվեստ ներթափանցեց նաև սիմվոլիզմը: Ուղղությունը փայլուն պտուղներ տվեց հայ գրականության մեջ՝ ի դեմս Վահան Տերյանի քնարերգության և Եղիշե Չարենցի վաղ շրջանի աղեղիայի: Սիմվոլիզմն իր տեղը գտավ նաև հայ պարբերական մանուլում՝ արծարծվելով «Բանբեր գրականութեան եւ արուեստի» և «Գեղարուեստ» հանդեսների էջերում:

3. 19-20-րդ դարերի սահմանագլխին սիմվոլիզմի ազդեցությունը սկսեց երևան գալ նաև հայ գեղանկարչության մեջ: Վարդես Սուրենյանցի «Շամիրանը Արա Գեղեցիկի դիակի մոտ», «Սալոմե», «Թմախիծ» կտավները սիմվոլիզմի պատկերասրահում հայ տաղանդաշատ նկարչի ներդրումը կարող են համարվել: Իր ստեղծագործական ողջ կյանքում նորարարության ձգտող Եղիշե Թաղեկոսյանը և զգալիորեն ներշնչվել է սիմվոլիզմից: Նայ արվեստում սիմվոլիզմն իր ամենանաքուր դրսելումն է գտել մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի արվեստում: Նկարչի ստեղծագործական վաղ շրջանի «Հեքիաթներ և երազներ» շարքն ամբողջապես ամփոփվում է սիմվոլիզմի շրջանակներում:

4. Սիմվոլիզմն իր դրոշնը դրեց նաև հայ քանդակագործության վրա. Նակոր Գյուրջյանի ճակատագրական կանայք՝ *femmes fatâle*-ներ «Սալոմեն», «Կենապատրան», անհանգիստ, զբոսական ոգի «Դկը», մարդկային մեղքերի ծանրության բեռք կրող «Քրիստոսը», «Երիտասարդություն», «Շույս» կերպար խորհրդանշերը սիմվոլիզմի փայլուն օրինակներ են:

5. Նայ կերպարվեստում սիմվոլիզմը ներթափանցման երկու աղբյուր ուներ: Առաջինը սիմվոլիզմի օրիան Եվրոպան էր, մյուսը՝ ուղղության ռուսական տարրերակը: Այսպես, եթե Վ. Սուրենյանցի արվեստում նկատելի է ամգլիական պրեռաֆայելիտների ազդեցությունը, ապա սարյանական «Հեքիաթներ ու երազներ» շարքը ռուսական սիմվոլիզմի ծնունդ է:

6. Յայ արվեստագետներից ոմանց համար սիմվոլիզմը թեև չդրսնորվեց անխառն ծևով, սակայն դարձավ յուրատեսակ հենակետ: Իրենց արվեստում սիմվոլիզմից «դասեր» քաղեցին Գերօփի Յակուլովը և Վահրամ Գայֆեճյանը:

7. Սիմվոլիզմը, ինչպես նաև դրան նախորդած իմպրեսիոնիզմն ու հաջորդած «իզմերը», հայ կերպարվեստում հանդես չեկավ որպես միասնական ուղղություն և չստեղծեց առանձին դպրոց: Այնուհանդերձ, հայ արվեստագետներն ստեղծեցին այս ուղղության թեմատիկային և էսթետիկային հարիր կտավներ ու քանդակներ: Եվ այդ ստեղծագործությունների գեղարվեստական արժեքը, ինչպես նաև տեղում ու դերը հայ կերպարվեստի գանձարանում, թույլ են տալիս խոսել հայկական սիմվոլիզմի մասին:

8. Յայ կերպարվեստում սիմվոլիզմի կերպարները տեղայնացվեցին (անդրադարձներ կատարվեցին հայոց դիցաբանության ու պատմության հերոսներին, Սալոմեի և Կիելպատրայի կողքին հայտնվեց հայկական *femtoe fatalis*-ը՝ Շամիրամը): Ի հակադրություն եվոպական սիմվոլիզմում հաճախ հանդիպող մղձավանային ու վշտագին տրամադրությունների՝ հայ նկարիչները, մեծիվ մասամբ, նախապատվություն տվեցին կյանքի անրջային, լուսավոր կողմին: Յայ արվեստում սիմվոլիզմը «տեղայնացվեց» հայ մշակույթին, լեզվանտածողությանն ու աշխարհընկալմանը համապատասխան՝ ստեղծելով ազգային ինքնատիպ օրինակներ:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. **Սկրտչյան Մ.**, Սալոմեի կերպարը հայ գեղարվեստում // Երիտասարդ հայ արվեստարանների գիտական չորրորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, էջ 68-73:

2. **Սկրտչյան Մ.**, Դիմի կերպարն ու դրա մարմնացումը Յակոբ Գյուրջյանի արվեստում // Երիտասարդ հայ արվեստարանների գիտական իինգերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2011, էջ 92-101:

3. **Սկրտչյան Մ.**, Սիմվոլիզմի գեղարվեստական մեթոդը և դրա արտացոլումը Յակոբ Գյուրջյանի արվեստում // Երիտասարդ հայ արվեստարանների գիտական վեցերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012, էջ 54-63:

4. **Սկրտչյան Մ.**, Սիմվոլիզմի պատմությունից, Կանթեղ, Գիտական հովանածների ժողովածու, 3 (52), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2012, էջ 204-210:

5. **Սկրտչյան Մ.**, Սիմվոլիզմի դրսնորումները Վարդգես Սոլրենյանցի արվեստում, Կանթեղ, Գիտական հովանածների ժողովածու, 3 (56), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2013, էջ 221-227:

6. **Սկրտչյան Մ.**, Սիմվոլիզմը Մարտիրոս Սարյանի արվեստում, «Երիտասարդ արվեստարան - 1», գիտական հովանածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013, էջ 132-140:

**МКРТЧЯН МАНЭ ГАРНИКОВНА**

**СИМВОЛИЗМ В АРМЯНСКОМ ИЗОБРАЗИТЕЛЬНОМ ИСКУССТВЕ:  
КОНЕЦ 19-ГО – НАЧАЛО 20-ГО ВЕКОВ**

**Резюме**

Диссертация посвящена комплексному изучению и детальному анализу влияния символизма в армянской живописи конца 19-го – начала 20-го веков.

В конце 19-го века во Франции зародилось новое художественное направление – символизм. Символисты полагали, что мир – это не более чем смутное отражение реальности; реальна только Идея, скрытая за видимым миром и достижимая лишь посредством искусства. Символизм за короткое время покорил всю Европу и нашел своих верных последователей также в России, в лице выдающихся теоретиков, поэтов и художников. В конце 19-го – начале 20-го веков символизм проявился и в армянском искусстве. Символистическим духом пронизана поэзия Ваана Теряна и ранний период творчества Егише Чаренца. В начале 20-го века влияние символизма чувствуется также в армянских периодических изданиях. На страницах "Вестника литературы и искусства" и "Гехарвеста" ("Искусство"), появляются статьи, обсуждающие теоретические вопросы течения. Среди последних важное место занимает статья Н. Адонца "Литературные заметки: символизм и декаданс", опубликованная в первой книге "Вестника" в 1904 году. Хотя символизм, как и предшествующий ему импрессионизм и последующие новаторские течения начала 20-го столетия, не состоялся в армянском изобразительном искусстве как единое течение или школа, однако вдохновил таких выдающихся мастеров, как Вардгес Суренянц, Егише Татевосян, Мартирос Сарьян, Акоп Гюрджян.

В диссертации армянский символизм в основном изучается на примерах творчества вышеназванных мастеров. Искусство каждого из них рассматривается отдельно и всесторонне, так как в их творчестве символизм каждый раз интерпретируется по-новому, в зависимости от эстетических взглядов и творческого кредо художника.

Переводчик на армянский язык Шекспира, Гете, Уайльда, автор статей, посвященных армянскому зодчеству, оформитель спектаклей и книг, родоначальник исторического жанра в армянской живописи Вардгес Суренянц был столь же восприимчив и к новаторским идеям времени. Во многих своих работах Суренянц пользуется такими достижениями модерна, как плоскостно-декоративные решения фона и изобилие орнамента. Наличие символистической тематики очевидно в таких шедеврах художника, как "Шамирам и Ара Прекрасный" (в данном случае символистическая тематика приобретает национальный характер), "Саломея" (излюбленная тема символистов, олицетворение *femme fatale*), "Печаль" (символический образ). Вместе с тем, эстетика символизма оставляет равнодушным армянского художника, искренно восхищающегося искусством прерафаэлитов.

Тончайший мастер армянского импрессионизма Егише Татевосян тоже не остался равнодушным и к символизму. Во многом опередившему свое время и

окружение Татевосяну были близки эстетические принципы символизма: отрешенность мысли и взгляда от настоящего времени и окружающей среды ("Одна из моих грез"), возвышение образа поэта-творца ("Гений и толпа", "Поэт", "Vox pacis"), восхищение прошлыми эпохами ("Античное видение"), внутренняя музыкальность ("Джангюлум", "Сонет").

В армянской живописи свое наиболее чистое выражение символизм нашел в искусстве Мартироса Сарьяна. В раннем цикле мастера "Сказки и грезы" свое отражение получили мечтательно-вдумчивые, волшебно-ирреальные образы и мотивы "второй волны" русского символизма. Верный своим идеалам о гармонической связи человека с природой, всеобъемлющей любви, искусство как ключе к счастью и прозрению, Сарьян создает мир-грезу, где царит Любовь и властвует Красота. Из эстетики символизма армянский художник заимствует поклонение мечте, но признает лишь ее светлые стороны.

Влияние символизма на искусство выдающегося армянского скульптора, жившего во Франции Акопа Гюрджяна, очевидно в нескольких аспектах творчества мастера. В первую очередь, это выбор тематики, где встречаются библейские персонажи и мифологические герои (Христос, Диана, Лeda, Демон), *femme fatale* (Саломея, Клеопатра), а также символические образы ("Молодость", "Отчаяние"). В скульптурах Гюрджяна дух символизма нетрудно заметить и в художественном языке: застывшие персонажи, стилизованные образы, плоскостность изображения, тема волны и т. д. Об увлечении символизмом свидетельствуют и эстетические взгляды скульптора: по мнению Гюрджяна, скульптура должна обладать тремя признаками – декоративностью, монументальностью и композицией.

Символизм сыграл определенную роль и в творческой биографии Г. Якулова и В. Гайфеджяна, но не стал решающим фактором в их искусстве.

Символизм в армянском изобразительном искусстве обрел свое уникальное обличье, согласно национальным традициям и мировоззрению.

Диссертация состоит из предисловия, трех глав (Глава 1 – Символизм как художественное течение: 1.1. Возникновение символизма: исторические, философские, литературные и художественные предпосылки, 1.2. Распространение символизма, эстетика и теоретики течения, 1.3. Особенности художественного символизма, виднейшие представители, 1.4. Волна символизма в России; Глава 2 – Символизм в армянском изобразительном искусстве конца 19-го – начала 20-го веков: 2.1. Проявление символизма в армянской литературе и искусстве. Современная публицистика и символизм, 2.2. Проявления символизма в творчестве Вардгеса Суренянца, 2.3. Проявления символизма в творчестве Егише Татевосяна, 2.4. Символизм в искусстве Мартироса Сарьяна, 2.5. Символизм в творчестве Акопа Гюрджяна; Глава 3 – Отголоски символизма в армянском изобразительном искусстве конца 19-го – начала 20-го веков), заключений, списка использованной литературы и альбома иллюстраций.

## MKRTCHYAN MANE

### SYMBOLISM IN ARMENIAN ART: LATE 19<sup>TH</sup> CENTURY AND EARLY 20<sup>TH</sup> CENTURY

#### Summary

This thesis is a comprehensive and detailed study of Symbolism in Armenian art in the late 19<sup>th</sup> and early 20<sup>th</sup> centuries.

By the end of the 19<sup>th</sup> century Symbolism, a new artistic movement, took its origin in France. The successors of this movement believed that the objective world is but a dim reflection of reality, whereas it is the Idea that is the most real, the Idea, hidden beyond the visible world and attainable solely through art. In a very short period of time the Symbolist ideology was disseminated throughout Europe and Russia becoming the main subject of interest for many outstanding theorists, writers and artists. In the late 19<sup>th</sup> and early 20<sup>th</sup> centuries Symbolism appeared also in Armenian art. Vahan Teryan's poetry, as well as the early period of Eghishe Charents' oeuvre, is fully penetrated by Symbolism. The impact of Symbolism is obvious in Armenian periodicals of the early 20<sup>th</sup> century. In "Bulletin of Literature and Art" and "Gegharvest" ("Art") one can find articles discussing theoretical problems of Symbolism. N. Adonts is the author of one of the most important articles: "Literary Notes: Symbolism and Decadance" ("Bulletin of Literature and Art", Book N1, 1904). Though Symbolism didn't manifest itself as an integral artistic movement in Armenian art (this was also characteristic for Impressionism and modern movements of the early 20<sup>th</sup> century), it inspired several great Armenian artists, Vardges Surenyants, Eghishe Tadevosyan, Martiros Saryan, Hakob Gurdjian among them.

The thesis is based on the study of the art of the above-mentioned artists. The art of each of these artists is discussed separately taking into consideration the fact that Symbolism in their oeuvre differs according to their own aesthetic views.

Outstanding Armenian artist Vardges Surenyants was an author of scientific articles, literary translations, theatrical decors and book illustrations. Having unique artistic sense, Surenyants used some elements of Art Nouveau in his paintings (flat and decorative background, abundance of ornament, etc.). The influence of Symbolism is evident in such masterpieces of the artist, as "Shamiram and Ara the Handsome" (in this case the Symbolist theme is driven from national example), "Salome" (one of the favorite themes of Symbolist artists representing *femme fatale*), "Sorrow" (image-symbol). At the same time Surenyants, who greatly admired the art of Pre-Raphaelites, was indifferent to the aesthetics of Symbolism.

Symbolism has played an essential role in the art of great master of Armenian Impressionism Eghishe Tadevosyan. The ideology of Symbolism has certain parallels in Tadevosyan's oeuvre: the denial of the real time and milieu ("One of my dreams"), elevation of Poet's image ("The Genius and the Crowd", "The Poet", "Vox Pacis"), admiration for the past ("The Ancient Apparition"), inner musicality ("Djangyulum", "Sonet").

The most pure expression of Armenian Symbolism is the early period of Martiros Saryan's oeuvre. The series "Fairy-tales and Dreams" reflects the dreamy,

pensive, and, at the same time, irreal nature of the young generation of Russian Symbolism. Saryan believed in harmony between nature and human being, eternal love and art as a way to happiness and insight. Thus he creates the wonderland where Love and Beauty are the only sovereigns. Saryan admires the Symbolist worship of magic dreams but never nightmares.

Symbolism is also traceable in the art of famous Armenian sculptor Hakob Gurdjian, who resided in France. The Symbolism influence in Gurdjian's art is evident in a number of aspects. It is manifested in the choice of subjects, where biblical and mythical (Christ, Diana, Leda, Demon) characters are common, along with the image of *femme fatale* (Salome, Cleopatra) and image-symbols (Youth, Despair). The impact of Symbolism is also obvious in Gurdjian's artistic style: frozen characters, stylized images, flat pattern, the motif of wave, etc. Armenian sculptor's aesthetic thinking resembles that of symbolists, too: in his definition of sculpture Gurdjian emphasizes three attributes - ornamentalism, monumentalism and composition.

Some characteristic features of Symbolism can be found in the art of G. Yakulov and V. Gaifedjian, nevertheless they didn't become essential in their oeuvre.

Armenian Symbolism, based on national traditions and ideology, developed its unique style and character.

The dissertation consists of a preface, three chapters (Chapter 1. Symbolism as an Artistic Movement: 1.1. The Origins of Symbolism: Historical, Philosophical, Literary and Artistic Preconditions, 1.2. The Era of Symbolism: the Aesthetics and the Theoretics of the Movement, 1.3. Symbolism in Art, Celebrated Artists 1.4. Symbolism in Russia, Chapter 2. Symolism in Armenian Art: Late 19<sup>th</sup> Century and Early 20<sup>th</sup> Century: 2.1. Symbolism in Armenian Literature and Art. Armenian Periodicals and Symbolism, 2.2. Symbolism in Vardges Surenyants' Art, 2.3. Symbolism in Eghishe Tadevosyan's Art, 2.4. Symbolism in Martiros Saryan's Art, 2.5. Symbolism in Hakob Gurdjian's Art, Chapter 3. The Echo of Symbolism in Armenian Art in the Late 19<sup>th</sup> Century and Early 20<sup>th</sup> Century), conclusions, a list of references and a catalogue of illustrations.